

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՊԻԿՈՒԼԻ «ՖԱՎՈՐԻՏ» ՎԵՊՈՒՄ

ԼԻԼԻԹ ԾԱՏՈՒՐՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Պատմավեպերի, պատմական ստեղծագործությունների թարգմանության ժամանակ բառային փոխակերպումներն անխուսափելի են հատկապես այն պատճառով, որ տեքստում պատկերված ժամանակաշրջանի լեզվական ոճավորման հիմնական միջոցները բառային և քերականական հնաբանություններն են, իսկ դրանց թարգմանությունը առավել դժվար է: Պատմական ստեղծագործությունների թարգմանության ժամանակ հատկապես կարևորվում է պատմաբանների և հնաբանների թարգմանությունը, քանի որ առաջանում է բնագրի լեզվի ազգային և պատմական կոլորիտը փոխանցելու մեծ և կարևոր խնդիր: Թարգմանության տեսության մեջ սովորաբար առանձնացնում են իրոյթը հաղորդելու երկու տարբերակ՝ տառադարձում և թարգմանություն: Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ թարգմանիչը՝ Վ. Վարդանյանը, կիրառել է պատմական իրոյթները (ռեալիա) և հնաբանությունները փոխանցելու նշված տարբերակները՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Այն դեպքերում, երբ վեպի պատմական կոլորիտը, ժամանակաշրջանը, միջավայրը պատկերելու և խիստ ընդգծելու կարիք է եղել թարգմանիչը, պահպանել է սլոյալ իրոյթները՝ պարզապես տառադարձելով դրանք՝ առանց հավելյալ բացատրությունների, իսկ որոշ դեպքերում տալով դրանց նկարագրությունը: Այն իրոյթների թարգմանությունը, որոնք հայ իրականության մեջ ընկալելի են, առավել հաջողված է: Որոշ դեպքերում իրոյթները փոխարինվում են չեզոք համարժեքով, ընթերցողին ծանոթ իրոյթով, սակայն փոխարինված ձևերը կա մ հնաբանություններ չեն, կա մ գուրկ են ոճական երանգավորումից:

Բանալի բառեր – բառային փոխակերպում, պատմավեպ, պատմաբան, հնաբան, իրոյթ, տառադարձում, պատճենում, համարժեքություն

Լիլիթ Ծատուրյան – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ
Лили́т Цату́рян – аспирант кафедры армянского языка ЕГУ
Lilit Tsaturyan – PhD Student at YSU Chair of Armenian Language
tsaturyan-1997lilit@mail.ru

Էլ. փոստ՝ mariamkarapetyan@ysu.am. <https://orcid.org/0009-0003-1457-1293>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 01.07.2024
Գրախոսվել է՝ 22.10.2024
Հաստատվել է՝ 07.03.2025
© The Author(s) 2025

Ներածություն: Բառային փոխակերպումների հիմնական պատճառն այն է, որ երկու լեզուների բառային կազմի մեջ մտնող միավորների իմաստները ամբողջությամբ չեն համընկնում: Այս տեսանկյունից առավել մեծ դժվարություն է ներկայացնում իրույթների (իրակությունների) թարգմանությունը, ինչը բնագրի լեզվի ազգային և պատմական կոլորիտը փոխանցելու մեծ և կարևոր խնդիր է:

Պատմավեպերի, պատմական հենք ունեցող ստեղծագործությունների թարգմանության մեջ տեքստի ժամանակային, ժամանակագրական, լեզվական ռճավորման հիմնական միջոցները բառային և քերականական հնաբանություններն են: Տվյալ դեպքում նրանք կատարում են այն հատուկ թարգմանական գործառնություն, որը չունեն բնագրի իրենց հարաբերակից լեզվական միավորները: Եթե բնագրի հնաբանությունները պատմական գիտելիքների և ժամանակաշրջանի կոլորիտի ստեղծման միջոց են, ապա թարգմանության մեջ նրանց վերապահված է նույն գործառնություն, ինչ բնագրում (տե՛ս Виноградов, 2001, 148):

Սովորաբար առանձնացնում են իրույթների մի քանի հիմնական խմբեր: Դրանցից են պատմական իրույթները, որոնցով անվանվում են այնպիսի առարկաներ, երևույթներ, հասկացություններ, որոնք հատուկ են եղել այս կամ այն ժողովրդին, տարածաշրջանին և սովորաբար բացակայում են այլ ժողովուրդների, ազգերի պատկերացումներում, լեզվում (տե՛ս Քամալյան, 2020, 68-69):

Պատմաբաներ: Ըստ ավանդական դասակարգման՝ բառաշերտի հնացած մասը բաժանում են երկու խմբի՝ **պատմաբաներ**, որոնք անվանում են հին ժամանակներում գոյություն ունեցող իրույթները (վերացել են իրույթները, վերացել են դրանք անվանող բառերը), և **հնաբաներ**, որոնք պատմական զարգացման ընթացքում փոխարինվել են հոմանիշ բառերով կամ փոխվել են կազմությամբ: Հնացած բառերն ու կապակցությունները գեղարվեստական գրականության մեջ հեղինակները կիրառում են նկարագրվող դարաշրջանը պատկերելու, որոշակիացնելու համար: Վ. Պիկուլի «Ֆավորիտը» պատմավեպ է, որում հեղինակի, հերոսների և պատմական իրադարձությունների նկարագրությունների լեզուները տարբերվում են միմյանցից: Բնական է, որ XVIII դարի իրողությունները, հերոսներին նկարագրող լեզուն պիտի հագեցած լինեին այդ դարաշրջանին բնորոշ լեզվատարրերով: Դրա կազմի մեջ են մտնում Եկատերինա II-ի գահակալման ժամանակաշրջանին բնորոշ հնաբանությունները, օտար, բարբառային բառերը: Լեզվական այդ տարրերի միջոցով վեպի լեզուն դառնում է վառ, արտահայտիչ՝ պատմական միջավայր ստեղծելու համար: Վեպում Վ. Պիկուլը լուծում է գեղարվեստական բարդ խնդիր. համոզիչ կերպով պատկերում է XVIII դարաշրջանը, փոխանցում ժամանակաշրջանի կոլորիտը կերպարների, նրանց խոսքի և գործունեության միջոցով: Դեռևս XVII դարի երկրորդ կեսին, երբ քաղաքի դերը առավել

նկատելի է դառնում, բանավոր կենդանի խոսքի և ժողովրդական բանաստեղծության լայն հոսքը ներթափանցում է ավանդական գրքային մշակույթի մեջ: Գրական արտահայտչականության շրջանագծում ոճերի ու բարբառների կտրուկ բախում և ձուլում է նկատվում: Գրական լեզվի մասին տեսակետը սկսում է արմատապես փոխվել: Հասարակության դեմոկրատական շերտերը գրականություն են բերում իրենց կենդանի լեզուն՝ բարբառներով, բառապաշարով, դարձվածքաբանությամբ, առածներով ու ասացվածքներով: Արդեն XVIII դարասկզբի լեզուն բնութագրվում է պետական, հրամանի լեզվի նշանակության ամրապնդմամբ, նրա ազդեցության ոլորտի ընդլայնմամբ: Այս գործընթացը ռուս գրական լեզվի աճող ազգայնացման, սլավոնառուսերենի եկեղեցական-գրքային բարբառներից անջատվելու և կենդանի բանավոր խոսքի հետ սերտաճման արդյունք է: XVIII դարի 40-50-ական թթ. ավելի շոշափելի և հրատապ է դառնում գրական նոր լեզվի ոճական կարգավորման և նորմավորման անհրաժեշտությունը: Ռուսաց գրական լեզվի նորմավորման նոր հիմքեր է դնում ռուս մեծ գիտնական և բանաստեղծ Մ. Վ. Լոմոնոսովը: Լոմոնոսովը «ռուսաց լեզվի» հայեցակարգում միավորում է ռուսերեն խոսքի բոլոր տարատեսակները՝ հրամանի լեզուն, աշխույժ բանավոր խոսքը՝ իր տարածքային դրսևորումներով, ժողովրդական պոեզիայի ոճերով: Գրական ռուսերենի նորմավորումը ենթադրում էր ոճերի քերականական կարգավորում: Սլավոնառուսերենի քերականական կարգերը, որոնք արդեն իսկ մեռել են ընդհանուր գործածության մեջ (օրինակ՝ անցյալ կատարյալի, անկատարի ձևերը, -ше-ով մակբայական դերբայները և այլն), ի վերջո համարվում են հնացած ձևեր: Պահպանվում են միայն սլավոնառուսական այն ձևերը, որոնք ընդունված են եղել պաշտոնական լեզվում: Սա թարմացնում և ժողովրդավարական է դարձնում գրական ռուսերենի ողջ քերականական կառուցվածքը (տե՛ս Виноградов, 1978, 40-47):

Թարգմանիչը՝ Վ. Վարդանյանը, կիրառել է պատմական իրույթները և հնաբանությունները փոխանցելու տարբեր ձևեր՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ իրույթի, հետևաբար համարժեք բառի բացակայություն, պատմական ժամանակաշրջանը փոխանցելու անհրաժեշտություն, միջավայրի պատկերում և այլն: Մակայն թարգմանության մեջ կան անհարթություններ՝ պայմանավորված նաև այն բանով, որ հենց հեղինակը բազմաթիվ անձանոթ իրույթների բացատրություն չի տալիս: «Երբեմն որոշ հեղինակներ որևէ կերպ չեն բացատրում իրականությունները՝ հուսալով, որ ընթերցողը դրանք կկռահի բնագրից: Նրանք, փորփրելով պատմական նյութը, վերցնում են իրականություններ՝ առանց մտածելու, թե վերջիններս կարդացողին որևէ տեղեկատվություն տալի՞ս են, թե՞ ոչ» (Մովսիսյան, 2016, 68):

Մովորաբար թարգմանության ժամանակ իրույթները փոխանցելու երկու դժվարություն է առաջանում՝ 1) թարգմանության լեզվում համարժեքի բացակայությունը, քանի որ տվյալ լեզվում այդ իրույթը նշանակող առարկան է բա-

ցակայում, 2) իրույթի առարկայական նշանակության հետ նաև կոլորիտը՝ ազգային և պատմական նրբերանգը, փոխանցելու անհրաժեշտությունը (տե՛ս Влахов, Флорин, 1980, 80): Այս տեսանկյունից առավել հաջողված պետք է համարել տեքստում անծանոթ իրույթի այնպիսի ներմուծումը, որը հնարավորություն կտա ընթերցողին անկաշկանդ ընկալելու այն՝ առանց հեղինակի կողմից յուրահաստուկ միջոցներ կիրառելու:

Իրույթը հաղորդելու երկու տարբերակ կա՝ տառադարձում և թարգմանություն: Տառադարձումը հնարավորություն է տալիս բնագրի լեզվի իրույթը մեխանիկորեն փոխանցելու թարգմանության լեզվին՝ հնարավորինս պահպանելով հնչյունական ձևը: Իրույթի թարգմանությունը կամ փոխարինումը կիրառվում է այն դեպքերում, երբ տառադարձումը այս կամ այն պատճառով հնարավոր կամ ցանկալի չէ: Այս դեպքում կարելի է ներմուծել նորաբանություն՝ այդ կերպ պահպանելով իրույթի բովանդակությունը և կոլորիտը: Այդպիսի բառեր նախ և առաջ կարող են լինել պատճենումները, կիսապատճենումները կամ իմաստային նորաբանությունները (տե՛ս Влахов, Флорин, 1980, 87-88):

Վեպի հայերեն թարգմանության մեջ թարգմանիչը հիմնականում դիմել է պատմական իրույթները տառադարձելու տարբերակին, սակայն թարգմանելու դեպքերը ևս քիչ չեն: Այսպես՝ *городничий* բառի համար *քաղաքապահ ոստիկան* կիսապատճենմամբ ստեղծել է նաև իմաստային նորաբանություն, քանի որ *городничий* Ռուսաստանում անվանում էին գավառական քաղաքի ղեկավարին մինչև XIX դարակեսը (Ожегов, Шведова, Толковый словарь русского языка), իսկ հայերեն թարգմանության մեջ *ղեկավար* իմաստը չի արտահայտվում. *Наконец, нужен ещё один чин – городничий, чтобы сидел в городке малом и за порядком присматривал* (Пиккуль, т. 2, 1984, с. 141-142). – *Վերջապես, հարկավոր է ևս մի պաշտոն՝ քաղաքապահ ոստիկան, որպեսզի նստեր փոքրիկ քաղաքում և կարգ ու կանոնին հետևեր* (Պիկուլ, հ. 2, 1989, էջ 187): (Մյուս օրինակներում կնշվեն միայն հատորը և էջը: Բոլոր օրինակներում պահպանված են թարգմանության կետադրությունը և ուղղագրությունը):

Թարգմանության մյուս խնդիրն է ոչ միայն բովանդակության փոխանցումը, այլ նաև կոլորիտի վերստեղծումը: Այդ դեպքում հասկացությունները հնարավոր չէ արտահայտել սեփական լեզվի միջոցներով, մինչդեռ օտար լեզվով գործածված բառը կարող է հարստացնել լեզուն: Մյուս կողմից՝ եթե թարգմանիչը օտար բառը ներմուծում է ինքնանպատակ կերպով, միայն կոլորիտի համար, մեղանչում է լեզվի մաքրության հանդեպ (տե՛ս Левый, 1974, 127-128): Թարգմանության մեջ կարիք կա պահպանելու միայն այն յուրահաստուկ տարրերը, որոնք ընթերցողը կարող է ընկալել որպես օտար միջավայրին բնորոշ, ազգային և պատմական առանձնահատկությունները կրող: Մնացած դեպքերում, երբ ընթերցողը չի ընկալում որպես միջավայրի արտա-

ցում, դրանք համարվում են անբովանդակ ձևեր, քանի որ հստակեցված չեն ընկալելու համար (տե՛ս Левый, 1974, 130): Այսպես՝ վեպում ռուսական կամ թուրքական միջավայրերը պատկերող պատմաբանները (*Ֆելդեգեր* (հ. 1, էջ 38), *Շլախտա* (հ. 1, էջ 103), *Ռազնոչինցի* (հ. 1, էջ 103), *Եսիր* (հ. 1, էջ 139), *Ղաղի* (հ. 1, էջ 139), *Ուլեն* (հ. 1, էջ 139), *Փաղիշահ* (հ. 1, էջ 140), *Ղիկաստերիա* (հ. 1, էջ 178), *Մագնատ* (հ. 1, էջ 291), *Կավալերգարդ* (հ. 1, էջ 334), *Կելլերմայստեր* (հ. 1, էջ 339) և այլն) թարգմանության մեջ արտահայտվել են տառադարձությամբ (վերը բերված պատմական իրությունների մի մասը ունի լեհական, գերմանական ծագում): Դրանք չեն թարգմանվում, քանի որ հայերենում պատմական համարժեք իրողություններ չկան, ուրեմն չկան նաև բառային համարժեքներ. *При всей примитивности ханства внутри его затаилась сложнейшая структура правления, в которой русские часто запутывались: султаны, мурзы, калги, агасы, беи, эфенди, кадии, муфтии!* (տ. 2, с. 221) - *Խանության ամենայն պարզությամբ հանդերձ՝ նրա ներսում թաքնված էր կառավարման մի շատ բարդ կառուցվածք, որի մեջ ռուսները հաճախ խճճվում էին. սուլթաններ, մուրզաներ, կալգաներ, ագասաներ, բեյեր, էֆենդիներ, ղաղիներ, մուֆտիներ* (հ. 2, էջ 122): Բերված օրինակում հեղինակի, թարգմանչի, հետևաբար՝ ընթերցողի գլխավոր խնդիրը այն չէ, թե ընդգծվածները ինչ պաշտոններ են, քանի որ նպատակը թուրքական կառավարման համակարգի «խայտաբղետությունը» ցույց տալն է: Դրանց բացատրության համար անգամ ծանոթագրություններ չկան:

Ժամանակի և տարածության հեռավորությունը հանգեցնում է այն բանին, որ բնագրում արտացոլված միջավայրի որոշ բնութագրական գծեր հասարակական այլ պայմաններում հասկանալի չեն, այդ պատճառով սովորական միջոցներով հաղորդելի չեն և հստակ թարգմանության փոխարեն պահանջում են բացատրություն կամ հակառակը՝ ակնարկ: Հասկանալի է, որ պետք է խուսափել կամայականությունից, հակառակ դեպքում կունենանք բնագրի պարզեցում: Ակնարկը հարմար է այնտեղ, որտեղ բնագրի արտահայտությունը ամբողջությամբ շարադրել հնարավոր չէ, քանի որ արտահայտչական միջոցի դերում հանդես է գալիս հենց հեղինակի լեզուն, այսինքն՝ հենց այն բաղադրիչը, որը հնարավոր չէ պահպանել թարգմանության համար (տե՛ս Левый, 1974, 134-135): Ակնարկը տեղին է նաև այնտեղ, որտեղ հնարավոր չէ ամբողջական բացատրություն: Եթե ազգային ընդհանուր լեզվի համապատկերում կիրառված է բարբառ կամ օտար լեզու, օտար լեզվական համակարգը ինքնին դառնում է գեղարվեստական միջոց և որպես այդպիսին թարգմանելի չէ, քանի որ թարգմանության հիմքում ընկած է հենց լեզվական նյութի փոխարինումը: Օտար լեզուն, որն ընդունված է այն միջավայրում, որտեղ ստեղծվել է բնագիրը, հաճախ հասկանալի չէ ընթերցողին, այդ պատճառով օտարալեզու խոսքը չի կարելի թարգմանության մեջ պահպանել: Եթե օտարալեզու արտահայտությունները փոխարինենք թարգմանչի գրական լեզվի

արտահայտություններով, դրանք կկորցնեն իրենց գեղարվեստականությունը: Առավել ընդունելի կլինի թարգմանել իմաստային տեսանկյունից կարևոր արտահայտությունները և ակնարկել օտար միջավայրը՝ թարգմանության մեջ պահելով ողջույնի խոսքերը և կարճ առարկությունները (ռեպլիկ), որոնց բովանդակությունը հասկանալի է համատեքստից (տե՛ս Левый, 1974, 137-138):

Վեպի հայերեն թարգմանության մեջ մի շարք պատմական իրություններ, որոնք երբեմն օտար բառեր են, տառադարձելուց հետո թարգմանիչը օգտագործել է նկարագրության, բացատրության եղանակը.

Кофишенк (տ. 1, с. 43) - կոֆիշենկ (սուրճի, թելի և այլ տաք ըմպելիքների կարգադրիչի պալատական աստիճան) (հ. 1, էջ 45):

Сераскир (տ. 1, с. 114) - սերասկեր (գլխավոր հրամանատար Թուրքիայում) (հ. 1, էջ 139):

Канер (տ. 1, с. 189) - կապեր (մասնաձևով. մասնավոր անձերի պատկանող ծովային նավ, որը պատերազմի ժամանակ հարձակվում է հակառակորդի առևտրական նավատորմի վրա) (հ. 1, էջ 241):

Курфюрст (տ. 1, с. 221) - կուրֆյուրստ (կայսր ընտրող իշխան հին Գերմանիայում) (հ. 1, էջ 284):

Гардемарин (տ. 1, с. 262) - գարդեմարին (ցարական Ռուսաստանում ծովային դպրոցի բարձր դասարանի աշակերտ) (հ. 1, էջ 339):

Фендрик (տ. 1, с. 281) - ֆենդրիկ (սպայիկ, պրապորշչիկ ցարական բանակում) (հ. 1, էջ 365):

Господар (տ. 1, с. 398) - գոսպոդար (Վալախիայի և Մոլդավիայի կառավարիչների տիտղոս XIV-XIX դարերում) (հ. 1, էջ 522):

Камарилья (տ. 1, с. 503) - կամարիլյա (պալատական արտոնյալների խումբ) (հ. 1, էջ 665):

Драбант (տ. 1, с. 552) - դրաբանտ (հրամանատարի անձնական պահակախմբի զինվոր) (հ. 1, էջ 732):

Այսպիսի պատմաբանները վեպում բավականին շատ են՝ պայմանավորված դրանում պատկերված ժամանակաշրջանով: Դրանք չբացատրելու դեպքում վեպի պատմականությունը ընկալելը բարդ կլիներ, քանի որ նշված և բազմաթիվ այլ պատմական իրություններ, խիստ ազգային առանձնահատկություններ ունենալուց բացի, այսօր հնաբանություններ են և ընթերցողին հիմնականում ծանոթ չեն: Սակայն վեպում քիչ չեն այն հնաբանություններն ու պատմական իրությունները, որոնց ո՛չ բացատրությունը, ո՛չ նկարագրությունը չեն տրվում: Պատճառն այն է, որ շատ հաճախ հեղինակի և թարգմանչի ըմբռնումներում համատեքստը ընկալելու ակնկալիք կա. ընթերցողը տվյալ իրությամբ կկռահի համատեքստից: Պարզապես հեղինակը կարծում է, որ մի քանի տվյալներ բավարար են անհրաժեշտ միջավայրը ստեղծելու համար, և կարիք չկա ընթերցողին ծանրաբեռնելու (տե՛ս Влахов, Флорин, 1980, 82): Այս-

պես, վեպի հայերեն թարգմանության մեջ մի շարք իրակությունների համար որպես բացատրություն նշվում է շատ կարճ տեղեկություն.

Капор (m. 1, c. 45) - կապոր (կնոջական գլխարկ) (h. 1, էջ 47):

Таратайка (m. 1, c. 229) - տարատայկա (թեթև երկանիվ սայլ) (h. 1, էջ 294):

Кокошник (m. 1, c. 566/ m. 2, c. 31) - կոկոշնիկ (կնոջական հին գլխասարք) (h. 1, էջ 751/h. 2, էջ 40):

Зитун (m. 2, c. 82) - գիպուն (գյուղացի տղամարդու կապայածն վերնագգեստ) (h. 2, էջ 108):

Дезабилье (m. 2, c. 160) - դեզաբիլիե (ֆր. 'տնային թեթև հագուստ) (h. 2, էջ 211):

Кайфер (m. 2, c. 283) - կաուֆեր (գերմ. 'գնորդ, առևտուր անող) (h. 2, էջ 374):

Բայց միշտ չէ, որ այդ տեղեկությունը բավարար կամ հավաստի է լինում: Այսպես՝ *кайфер* բառի ծագումն ուսումնասիրելիս նկատում ենք, որ այն ունի ընդհանրություններ գերմաներեն *käufer*՝ գնորդ, և ֆրանսերեն *coiffeur*՝ վարսավիր բառերի հետ: *Кайфер* բառի դիմաց բառարանում տրված է *кyaфep* տարբերակը (տե՛ս Епишкин, 2010), որը նշված է որպես հնացած ձև և նշանակում է վարսավիր (տե՛ս Епишкин, 2010): Նախ՝ համատեքստից կարելի է հասկանալ, որ բառի *գնորդ* բացատրությունը չի համապատասխանում բնագրի բովանդակությանը: Բացի դրանից՝ նշվում է, որ Պոտյոմկինը դժգոհում է գնդերում վարսավիրանոցներ բացելուց, ինչի կարիքը ամենևին չկար.

Մազեր գանգրացնելն ու վրան փռշի ցանելը արդյոք զինվորի գործ է: Մինչդեռ զինվորները ոչ ժամանակ ունեն, ոչ էլ կաուֆեր են... (h. 2, էջ 374):

Նշանակում է՝ թարգմանիչը տվյալ իրության համար ոչ ճիշտ բացատրություն է տվել, որը կապ չունի համատեքստի բովանդակության հետ:

Քիչ չեն ընթերցողի ֆոնային գիտելիքները գերագնահատելու դեպքերը, երբ թարգմանիչը չի բացատրում ընթերցող հանրությանը անհասկանալի իրությունը: Այն, որ անձանթ իրությամբ բնագրում հանդիպած ընթերցողը գտնվում է համեմատաբար բարենպաստ իրավիճակում, քան թարգմանությունը ընթերցողը, ճիշտ է (տե՛ս Влахов, Флорин, 1980, 83): Այսպես, վեպի հայերեն թարգմանության մեջ կան մի շարք պատմաբաններ, որոնք ընթերցողը պիտի փորձի կռահել համատեքստից, ինչը ոչ միշտ է հաջողվում: Դրանք հիմնականում պատմական տվյալ ժամանակահատվածում տարբեր պաշտոնների կամ հաստատությունների անվանումներ են, իսկ թե ինչ պաշտոններ են, ովքեր կարող էին զբաղեցնել դրանք, թարգմանիչը չի պարզաբանում: Այդ պատմաբանների մի մասը պատկերացում է տալիս ռուսական արքունիքի, մյուս մասը՝ գերմանական և թուրքական միջավայրերի մասին: Օրինակ՝ այն, որ *կապրալ*, *գեֆրեյտ-կապրալ*, *վից-վախմիստր*, *ցալմայստեր* պատմաբանները զինվորական աստիճաններ են, կարելի է կռահել համատեքստից, բայց թե դրանք ինչ աստիճանակարգություն և առանձնահատկություններ ունեն, ընթերցողը պետք է կռահի.

....И под новый год Потемкин был произведен в **гефрейт-капралы** (т. 1, с. 106) –Եվ նոր տարվա նախօրեին Պոտյոմկինին շնորհվեց **գեֆրեյտ-կապրալի** աստիճան (հ. 1, էջ 128):

При надевании короны погребальной помогал мне **капрал** Конной гвардии - Потемкин, человек услужливый и бедный. Дайте ему чин следующий... Потемкин стал **виц-вахмистром** (т. 1, с. 133) - Թադման թագը հազցնելիս ինձ օգնել է հեծյալ գվարդիայի **կապրալ** Պոտյոմկինը՝ պատրաստակամ և աղքատ մի մարդ: Հաջորդ աստիճանը տվեք նրան... Պոտյոմկինը դարձավ **վից-վախմիստր** (հ. 1, էջ 164):

....Казну Артиллерийского ведомства Гришка (по чину **цалмейстера**) уже разворовал (т. 1, с. 141) -Գրիշան (աստիճանով **ցալմայստեր**) արդեն կոռուպտել է Հրետանային գերատեսչության գանձարանը (հ. 1, էջ 175-176):

Նույն կերպ վեպում հանդիպում են ազգային տարազի տարրերի, չափման միավորների անվանումներ, որոնք այսօր հնաբանություններ են և հայերեն թարգմանության մեջ պարզապես տառադարձվել են՝ առանց հավելյալ բացատրությունների.

У профессора латыни пять пуговиц на **кафтани**, а четыре на **камзоле** (т. 1, с. 92) - Լատիներենի պրոֆեսորի **կաֆտանի** վրա հինգ կոճակ կա, **կամզոլի** վրա՝ չորս (հ. 1, էջ 109); А в Берлине по векселю Елизаветы король отсыплет мне **дукатов**, сколько я попрошу (т. 1, с. 38) - Բեռլինում թագավորը Ելիզավետայի մուրհակով նա ինձ կտա այնքան **դուկատ**, ինչքան ես կխնդրեմ (հ. 1, էջ 37); Стоят лишь в сорока **лье** от Киева. (т. 2, с. 36) - Կանգնած են Կիևից ընդամենը քառասուն **լյե** հեռավորության վրա (հ. 2, էջ 47):

Կամ, օրինակ՝ **գարբելյտել** բառի համար թարգմանիչը բացատրություն չի տալիս՝ թերևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ համատեքստից կարելի է հասկանալ խոսքը մազերի մասին է. «Այդ «գարբելյտելը» լավ է միայն ոջիլներ բուծելու համար» (հ. 2, էջ 372): Իսկ մինչ այդ գլխավոր հերոսներից Պոտյոմկինը խոսում է զինվորների գլխի պրուսական հյուսքը կտրելու մասին: Թե ինչպիսի հյուսքեր էին, և ինչու էին այդ ժամանակ այդպիսի հյուսքեր պահում, որոնք Պոտյոմկինը ուզում է վերացնել, ընթերցողին մնում է անհայտ:

Երբեմն կարելի է կատարել մոտավոր թարգմանություն, որով հաջողվում է, թեև ոչ այնքան հստակ, փոխանցել իրության առարկայական բովանդակությունը, բայց գրեթե միշտ կորչում է կոլորիտը, քանի որ տեղի է ունենում կոննոտատիվ համարժեքի փոխարինում ռճականորեն չեզոքով: Մոտավոր թարգմանության ժամանակ հնարավոր են մի քանի դեպքեր. թարգմանիչը տեսականիչ բառը կարող է փոխարինել սեռանիշով, ինչը թարգմանության տեսության մեջ հայտնի է ընդհանրացում անունով, գործառությանի համաբանությամբ, երբ ընթերցողին անձանոթ իրությոթ փոխարինվում է նրան ծանոթ իրությոթ (օրինակ՝ որևէ անձանոթ երաժշտական գործիքի փոխարեն ընթերցողին հայտնի գործիքի անվանումը կիրառելը), նկարագրությամբ, բացատրությամբ, որը կիրառվում է այն դեպքում, երբ թարգմանության այլ

տարբերակ չկա (տե՛ս Влахов, Флорин, 1980, 90-91): Վեպի հայերեն թարգմանության մեջ այսպիսի փոխարինումներն անխուսափելի են: Այսպես՝ անծանոթ իրույթը ծանոթ իրույթով փոխարինելու դեպքերը ոչ միշտ են հաջողված. *После чего наша в халате и при тюрбане выбрался на фас крепости. (տ. 1, с. 423) - Դրանից հետո փաշան, խալաթով ու թաասկով, դուրս եկավ բերդի ճակատամարտ (հ. 1, էջ 557):* *Тюрбан* բառը հայ իրականության մեջ անծանոթ է, և թարգմանիչը նախընտրել է *թաասկ* տարբերակը: Սակայն *тюрбан* բառի բացատրությանը («Головной убор восточных народов из полотнища лёгкой материи, обмотанного вокруг головы» (Ожегов, Шведова, Толковый словарь русского языка)) առավել համապատասխան է *չալմա* բառը, որը ընկալելի է հայ ընթերցողի համար: Ի դեպ *тюрбан* բառը մեկ ուրիշ հասկացում թարգմանիչը տառադարձել է *տուրբան*, իսկ տողատակում որպես բացատրություն նշել հենց *չալմա*.а *тюрбаны* – из розового шёлка, осыпанного алмазными блестками (տ. 2, с. 173) -իսկ *տուրբանները*՝ պլմաստի ցրոնքներով պատած վարդագույն մետաքսից (հ. 2, էջ 493): Վեպում *թաասկ*-ով է փոխարինվել նաև *чепец* բառը. *Потёмкин сказал, что после измены Римского-Корсакова императрица «забросила чепец за мельницу» (տ. 2, с. 173) - Պոտյոմկինն ասաց, որ Ռիմսկի-Կորսակովի դավաճանությունից հետո կայսրուհին «թաասկը գցել է ջրաղացից այն կողմ» (հ. 2, էջ 228):*Նախ՝ հայերենում *թաասկ* բառն ունի սեռային ընկալում. այն դնում են տղամարդիկ, իսկ վեպում խոսքը կնոջ գլխաշորի մասին է: Բացի այդ՝ *чепец* բառը մեկ ուրիշ տեղում թարգմանված է *շորագլխարկ* տարբերակով. *Моя мать окончательно сбита столку своими бесподобными куртизанами, ради них она забросила свой чепец за мельницу (տ. 2, с. 234) - Մայրս լրիվ խելքը տվել է իր աննման կուրտիզաններին, նրանց համար իր շորագլխարկը գցել է ջրաղացից այն կողմ (հ. 2, էջ 308):* *Чепец* բառի համար այս համարժեքը, որը, կարծում ենք, առավել համապատասխան է համատեքստի բովանդակությանը, նշված է նաև Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» (տե՛ս Ղարիբյան, 1977, 1358): Թարգմանության մեջ այսպիսի անփութությունը, կարծում ենք, պայմանավորված է վեպի մեծ ծավալով: Նույն կերպ *жупан* բառը, որը հնարանություն է, փոխարինվել է ռճականորեն չեզոք, այսօր կիրառելի *կիսաբաձկոն* բառով. *Её сопровождали богатые паны в жупанах (տ. 2, с. 24) - Նրան ուղեկցում էին կիսաբաձկոնով հարուստ պաներ (հ. 2, էջ 31):* Բառի իմաստային պատճենման պատճառը թերևս դրա բառարանային բացատրությունն է. «Старинный польский или украинский суконный полукафтан» (Ожегов, Шведова, Толковый словарь русского языка): Իսկ *лапоть* բառը փոխարինվել է *տրեխ* տարբերակով, որը ծանոթ է հայ ընթերցողին, չնայած *лапоть*-ը, որը հին ժամանակներում տարածված էր Արևելյան Եվրոպայում և Ռուսիայում, ի տարբերություն տրեխի, հյուսվում էր ծառե-

¹ Գերմաներեն այս արտահայտությունը թարգմանվում է այսպես. «Այլևս բոլորովին հնարավոր չէ սանձել նրան, այդ անիծյալին...» (Վ. Պիկուլ, Ֆավորիտ, հ. 2, էջ 229):

րի կեղևից.Чтобы не слишком-то обращали внимание на зипуны и лапту (տ. 2, с. 82) -որպեսզի այնքան էլ շատ ուշադրություն չդարձնեն զիպունների ու **տրեխների** վրա (հ. 2, էջ 108): Կամ՝В Конном regimente даже ротмистры по восемь годов **полушки** не имели (տ. 1, с. 123) -Հեծյալ **ռեզիմենտում** ռոտմիստրներն անգամ մի ութ տարի **աշխատավարձ** չեն ստացել (հ. 1, էջ 151): Ռուսերենի բացատրական բառարաններում *полушка* բառը բերվում է որպես հնացած բառ՝ քառորդ կոպեկին համարժեք պղնձե փոքր մետաղադրամ (տե՛ս Ожегов, Шведова, Толковый словарь русского языка), համարյա հաշվից դուրս, ամենափոքր մետաղադրամը, քառորդ կոպեկ նշանակություններով (տե՛ս Даль, Толковый словарь живого великорусского языка): Ա. Ղարիբջանի «Ռուս-հայերեն բառարանում» որպես համարժեքներ նշվում են *պոլուշկա*, *կես գրոշ*, *քառորդ կոպեկ*, իսկ *не иметь не полушки* արտահայտության համար, որը բնագրում էլ հանդիպում է, բերված է *ոչ մի գրոշ չունենալ* բացատրությունը (տե՛ս Ղարիբջան, 1977, 842): Թարգմանիչը ընտրել է ոճականորեն չեզոք բառ, որը ոչ միայն հնաբառ չէ, այլ նաև չի արտահայտում *полушка*-ի վերը նշված իմաստները (Վ. Պիկուլը նկատի ունի, որ ստանալիք գումարը հազիվ քառորդ կոպեկ պիտի լիներ): Այս բոլոր դեպքերում փոխարինված ձևերը նույն գործառույթն ունեն, սակայն ազգային և պատմական կոնորիտը կորել է:

Թարգմանիչը երբեմն բառի հայերեն համարժեքի բացակայության պատճառով դիմել է նկարագրությամբ բացատրելու եղանակին. *Цок-цок-цок, стучали ботфорты по каменным плитам* (տ. 1, с. 35) - *Հը մի-դը մի-դը մի, իջնում էին հեծյալի երկարաճիտք կոշիկները քարասալերի վրա* (հ. 1, էջ 34), *На голове Прошки треух, ноги в валенках* (տ. 1, с. 454) - *Պրոշկան դրել էր ափսանջակներով ու ծոծրակակալով գլխարկ, ոտքերին քաշել վալենկաներ* (հ. 1, էջ 599):

Որոշ դեպքերում էլ կատարել է ընդհանրացում՝ տեսականիշ բառը փոխարինելով սեռանիշով. *Предстал человек с лицом, страшно изуродованным оспой, Бауммаки вконец раздрызганы* (տ. 1, с. 267) - *Ներկայացավ ծաղկախտից սարսափելիորեն այլանդակված դեմքով մեկը. կոշիկները՝ անասելի քրքրված* (հ. 1, էջ 346):

Վեպի հայերեն թարգմանության մեջ թարգմանիչը նաև դիմել է մի հնարքի. առաջին անգամ կիրառված իրույթի համար տալիս է մոտավոր կամ նկարագրական թարգմանություն, իսկ այդուհետև նույն իրույթը պարզապես տառադարձում է: Օրինակ՝ *լէյբ* բառով սկսվող պատմական իրույթների համար միայն առաջին օրինակում թարգմանում է *պալատական* (....*Это были лейб-медики Санчес, Кондоиди и Каав-Бургаве*. (տ. 1, с. 44) - *Դրանք պալատական բժիշկներ Սանչեսը, Կոնդոիդին և Կաավ - Բուրգավեն էին* (հ. 1, էջ 43)), մյուս բոլոր դեպքերում՝ *լէյբ* բառով (*լէյբ-վիրաբույժ* (հ. 1, էջ 47), *լէյբ-կառապան* (հ. 1, էջ 273) նև):

Մեծ մասամբ բացատրություն չեն պահանջում ընթերցողին ծանոթ իրությունները: Դրանք սովորաբար միջազգային, ինչպես նաև տարածաշրջանային իրություններն են (Влахов, Флорин, 1980, էջ 81):

Инквизиция беспоощадна (տ. 2, с. 89) - Բնկվիզիցիան անողոր է (հ. 2, էջ 117); Там возникла его знаменитая Купавинская мануфактура (տ. 2, с. 282) - Այնտեղ առաջացավ նրա նշանավոր Կուպավայի մանուֆակտուրան (հ. 2, էջ 372); С каких пор настолько низко пали итальянские маркизы, что стали продаваться в службу королям германским (տ. 2, с. 339) - Երբվանի՞ց են այնքան ցածր իջել իտալական մարկիզները, որ սկսել են ծախվել գերմանական թագավորներին (հ. 2, էջ 446); Эдак-то и любой мужик частушки складывать может (տ. 2, с. 339) - Էդպես որ վերցնենք՝ ամեն մի մուժիկ էլ կարող է չաստուշկաներ հորինել (հ. 1, էջ 350):

Այն դեպքերում, երբ հեղինակի (հետևաբար՝ ընթերցողի) ուշադրությունը բևեռված է տվյալ իրության վրա, որն ունի առավել կարևոր իմաստային բեռնվածություն, թարգմանիչը կարող է հենց տեքստում տալ մանրամասն բացատրությունը, անգամ ստուգաբանությունը, եթե դա անհրաժեշտ է. *Происка стал юнгой (տ. 1, с. 185) - Պրոշկան դարձավ յունգա (կրտսեր նավաստի) (հ. 1, էջ 235):*

Հնաբառեր: Նշենք, որ վեպում կան նաև հնաբառեր, որոնք արդեն բնորոշում են ժամանակաշրջանի լեզուն, խոսքը: Դրանք հայերեն համարժեքով փոխարինելը հիմնականում հնարավոր չի եղել: Այսպես՝ *Не ведаю, сколь вечен я, обжора и сластена (տ. 1, с. 108) - Ինձ հայտնի չէ, թե ինչքան եմ աչքերելու ես՝ շատակերս ու քաղցրասերս (հ. 1, էջ 131)* օրինակում *сколь-ը* сколько, насколько դերանունների հնացած ձևն է (տե՛ս Ожегов, Шведова, Толковый словарь русского языка), իսկ *Как бы нас менерича на эту вот штуку налогом новым не обклали... (տ. 1, с. 89) - Մեկ էլ տեսար հիմա էս բանի համար մի նոր հարկ դրին մեզ վրա... (հ. 1, էջ 105); Дарья Василевна понесла вскорости.... (տ. 1, с. 21) - Դարյա Վասիլևնան շուտով հղիացավ.... (հ. 1, էջ 14)* օրինակներում *менерича-ն*՝ теперь մակբայի (տե՛ս Ушаков, Большой толковый словарь русского языка), *вскорости-ն*՝ вскоре մակբայի հնացած տարբերակներն են (տե՛ս Ушаков, Большой толковый словарь русского языка): Այս հնաբառերից ոչ մեկը թարգմանության մեջ հնաբառով չի փոխարինվել համարժեք ձևի բացակայության պատճառով: Երբեմն թարգմանիչը փորձել է փոխհաստոցել՝ նույն համատեքստում մեկ այլ տեղ կամ հենց նույն հնաբառի փոխարեն գործածելով խոսակցական, նաև հազվադեպ կիրառություն ունեցող բառեր. *И как только учал о сем предмете вообразать, на смертный грех сей довольно-таки представилось мне много всяких способов... (տ. 1, с. 98) - Ու հենց որ սկսեցի այս մասին մտածել՝ սույն մահացու մեղքի համար բավականաչափ շատ զանազան եղանակներ ներկայացան ինձ... (հ. 1, էջ 118):* *Сей* դերանունը *суйն* դերանունով փոխարինելով՝ թարգմանիչը փոքր-ինչ պահպա-

Եզրակացություն: Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ պատմաբաների և հնաբանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ վեպի պատմական կոլորիտը, ժամանակաշրջանի միջավայրը պատկերելու և խիստ ընդգծելու կարիք է եղել, թարգմանիչը՝ Վ. Վարդանյանը, ինչ-որ առումով նաև ստիպված է եղել պահպանել տվյալ իրույթները՝ պարզապես տառադարձելով դրանք՝ առանց հավելյալ բացատրությունների, հավանաբար վեպը չծանրաբեռնելու համար, իսկ որոշ դեպքերում տալով դրանց նկարագրությունը: Հայ իրականության մեջ ընկալելի միջազգային և տարածաշրջանային իրույթների կամ դրանց հայերեն համարժեքները լինելու դեպքերում փոխարինումներն ավելի հաջողված են, ինչը չի կարելի անել չեզոք համարժեքով, ընթերցողին ծանոթ իրույթով փոխարինելու մասին, քանի որ փոխարինված ձևերը կա՛մ հնաբանություններ չեն, կա՛մ գուրկ են ուճական երանգավորումից: Այնուամենայնիվ, վերջին դիտարկումը չի ստվերում վեպի պատմական կոլորիտը փոխանցելու ջանքերը: Թերևս ընթերցողի համար վեպը ըմբռնելու տեսանկյունից ավելի խրթին են դարձնում այն պատմաբաները, որոնց բացատրությունները կարևոր են, սակայն բացակայում են վեպի թարգմանության մեջ: Իսկ հնաբաները, որոնցով հենց տվյալ ժամանակաշրջանի լեզուն է բնորոշվում, համարժեք ձևերով փոխարինել գրեթե հնարավոր չի եղել, քանի որ դրանք գուտ տվյալ լեզվին հատուկ բառեր են: Որպես փոխատուցում թարգմանիչը կիրառել է խոսակցական կամ հազվադեպ գործածություն ունեցող բառեր:

ЛИЛИТ ЦАТУРЯН – Перевод исторических реалий и архаизмов в романе В. Пикуля «Фаворит». – При переводе исторических романов, исторических произведений неизбежны лексические трансформации особенно потому, что основным средством языковой стилизации периода, изображенного в тексте, являются лексико-грамматические архаизмы, перевод которых представляет большую трудность. При переводе исторических произведений особое значение имеет перевод исторических слов и архаизмов, поскольку существует большая и важная проблема передачи национально-исторического колорита языка оригинала. В теории перевода обычно различают два способа передачи реалий: транскрипцию и перевод. В армянском переводе романа В. Пикуля «Фаворит» переводчик В. Варданян использовал упомянутые варианты передачи исторических реалий и архаизмов в силу ряда обстоятельств. В тех случаях, когда необходимо было изобразить и сильно подчеркнуть исторический колорит романа, среду эпохи, переводчик сохранял данные реалии, просто транскрибировал их без дополнительных пояснений, а в ряде случаев давая их описание. Перевод реалий, воспринимаемых в армянской действительности, более удачен. В некоторых случаях реалии заменяются нейтральным эквивалентом или знакомой читателю реалией, но заменяемые формы либо не являются архаизмами, либо лишены стилистической окраски.

Ключевые слова: лексическая трансформация, исторический роман, историзм, архаизм, реалия, транскрипция, калька, эквивалентность.

LILIT TSATURYAN – Translation of Historical Realias and Archaisms in V. Pikul's Novel "The Favorite". – During the translation of historical novels and historical works lexical transformations are inevitable especially because the main means of linguistic stylization of the period depicted in the text are lexical and grammatical archaisms, the translation of which is very difficult. During the translation of historical works the translation of historisms and archaisms is especially important because there is a big and important problem of conveying the national and historical flavor of the original language. In the theory of translation two ways of conveying the realia are usually distinguished: transcription and translation. In the Armenian translation of V. Pikul's novel "The Favorite" the translator V. Vardanyan used the mentioned versions of conveying historical realia and archaism due to a number of circumstances. In those cases, when it was necessary to depict and strongly emphasize the historical flavor of the novel, the environment of the era the translator retained the realia by simply transcribing it without additional explanations, and in some cases giving its description. The translation of the realia perceived in the Armenian reality is more successful. In some cases, realia is replaced by a neutral equivalent or by the realia familiar to the reader, but the replaced forms are either not archaisms or lack stylistic coloring.

Key words: lexical transformation, historical novel, historism, archaism, realia, transcription, calque, equivalence.

Գրականության ցանկ

Աղայան Է. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ.

Ղարիբյան Ա. (1977), Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.

Մովսիսյան Ա. (2016), Իրականությունների թարգմանության մի քանի հարցեր, «Կանթեղ» գիտական հոդվածներ, 2 (67), Երևան, «Ասողիկ» հրատ., 66-73 էջեր

- Պիկուլ Վ.** (1989), Ֆավորիտ, թարգմ.՝ Վ. Բ. Վարդանյան, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ., 776 էջ
- Պիկուլ Վ.** (1989), Ֆավորիտ, թարգմ.՝ Վ. Բ. Վարդանյան, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 742 էջ
- Քամալյան Ա.** (2020), Թարգմանության տեսության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 162 էջ
- <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ozhegov/fc/slovar-198-3.htm#zag-14240>
- <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ozhegov/fc/slovar-202-8.htm#zag-21427>
- <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ozhegov/fc/slovar-207-23.htm#zag-43360>
- <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ozhegov/fc/slovar-209-11.htm#zag-55885>
- <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ozhegov/fc/slovar-210-10.htm#zag-62639>
- <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ushakov/fc/slovar-194-17.htm#zag-7131>
- <http://rus-yaz.niv.ru/doc/gallism-dictionary/fc/slovar-202-40.htm#zag-21179>
- <http://rus-yaz.niv.ru/doc/small-academic-vocabulary/fc/slovar-207-61.htm#zag-48574>
- https://www.4italka.ru/nauka_obrazovanie/yazykovedenie/182893/fulltext.htm?fbclid=IwAR24xfD7R2KFL87glDFz-SPMdp3J4bMZw-YlhgVbJMaXfhk5PJ5gXek3cQ8
- Виноградов В. В.** (1978), История русского литературного языка. М., изд. «Наука».
- Виноградов В. С.** (2001), Введение в переводоведение (общие и лексические вопросы). М., изд. института общего среднего образования РАО, 224 с.
- Влахов С., Флорин С.** (1980), Непереводимое в переводе. М., изд. «Международные отношения».
- Даль В. И.**, Толковый словарь живого великорусского языка. <http://rus-yaz.niv.ru/doc/explanatory-dictionary-dalya/fc/slovar-207-32.htm#zag-29220>
- Епишкин Н. И.** (2010), Исторический словарь галлицизмов русского языка. М., ЭТС изд. <http://rus-yaz.niv.ru/doc/gallism-dictionary/fc/slovar-202-14.htm#zag-18179>
- Левый И.** (1974), Искусство перевода. М., изд. «Прогресс»
- Ожегов С. И., Шведова Н. Ю.**, Толковый словарь русского языка. <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ozhegov/fc/slovar-195-6.htm#zag-10155>
- Пикуль В. С.** (1984), Фаворит, т. 1, Ленинград, изд. «Лениздат», 583 с.
- Пикуль В. С.** (1984), Фаворит, т. 2, Ленинград, изд. «Лениздат», 550 с.
- Ушаков Д. Н.**, Большой толковый словарь русского языка. <http://rus-yaz.niv.ru/doc/dictionary-ushakov/fc/slovar-210-5.htm#zag-74794>